

2. Դայլգետ-ճորոխ գօտին: Այս Պոնտական հողամասին ներքսակողմը կը գրտնուի, եւ կը բաղկանայ Անտիտալուսեան (Հարաւարեւմուտքէ դէպ ի Հիւսիսարեւելք ձգուող) ծալքերէ: Հրաբղխականութիւնը հոս երկրորդական դեր մ'ունի:

3. Դարալագետազի գօտին՝ ի միասին առեալ Արեւմտեան Ղարաբաղը, որ նոյնպէս հիւսիսարեւելեան եզրալեռանց ներքսակողմը կը գտնուի: Այս գօտին Երանեան (Հիւսիսարեւմտեան-Հարաւարեւելեան) ծալք ունի, եւ շատ կատարեալ խաւակարգ մը կը ներկայացընէ, բայց հրաբղխականութիւնը ցանցառադէպ է: Արեւելեան եզրալեռներէն կը բաժնուի Ախմանգան-Սեւան-Կենդրոնական Ղարաբաղ հրաբղխային գօտիով:

Հայաստանի մէկ ծայրէն միւսը կը տարածուի՝ արեւմուտքէ արեւելք՝ ծալուածքարերու կենդրոնական ողնաշար մը: Իւր կապակցութիւնը կ'ընդհատի առիշեղ գնատածներով: Այսպէս՝ Մ'նձուր («Մուզուր») եւ Մերջան լեռանց անտիտալուսեան զիծը կը կտրուի Երզնկայի գնատածով, բայց կը շարունակուի Բէշլի եւ Մելբերդ լեռներով, Մարիամ լեռնով եւ Դերջանի լեռնաշղթայով եւ կը կազմէ Կարնոյ ու Բասնի դաշտերուն հարաւային սահմանը (Փարանտէօքէն եւ Խան լեռներ), թեթեւ մը կը ծօի Շատին լեռնով, եւ միջին Երասխի խորունկ գնատածի պատճառաւ նոր ընդհատութիւնէ կտրը՝ կը շարունակուի Չինլէրլի<sup>13</sup> լեռնով եւ Դարալագետազի լեռներով, մինչեւ որ կը հասնի Արեւմտեան Ղարաբաղի բարձր ու Երանեան ուղղութիւն ունեցող շղթային:

գետազի լեռներով, մինչեւ որ կը հասնի Արեւմտեան Ղարաբաղի բարձր ու Երանեան ուղղութիւն ունեցող շղթային:

(Շարունակելի:)

Տ. Յ. Տ.



**ՄԻՋՐԻՇՏԵՆԻ Գ. ՊԵՏԵՐԵՉՄԻՆ ԲՐԵՏԻՇԵՆՔՆԵՐԸ ԳԻՊՐ ՊՈՆՏՈՍ ԵՒ ՀՇՇՇՇՇՇ**

Ներկայիս կու տանք թարգմանութիւնը Փելիքս Գուգէի «Երրորդ Միջրդատեան պատերազմին արշաւանքները դէպի Պոնտոս եւ Հայաստան (Die Feldzüge des dritten mithridatischen Krieges in Pontos und Armenien) համառոտ մէկ ուսումնասիրութեան, որ նախապէս լոյս տեսած է դասական պատմութեան հետազոտութեան նուիրուած «Klio» պարբերաթերթին 1920 տարւոյ Ի. համարին 332—343 էջերուն մէջ:

Խորագրէն կը հասկցուի արդէն թէ ուսումնասիրութեանս առարկան՝ Միջրդատ Եւպատորի Պոնտոսի արքային, եւ Պոմպէոսի հռոմէական ասիական լեզէոններու ընդհանուր հրամանատարին միջեւ մղուած ծանօթ երրորդ Միջրդատեան պատերազմին նկարագրութիւնն է, ուր հանգամանօքէն կը հետազոտուին

(էջ 445, յիշելով նաեւ մերձակայ «Յովհաննու Մկրտչի» աւերակ մեղսատանը. եւ «Չինլէրլի կամ Սերայ-պուլազ» էջ 441): Այս Չինլէրլի ի հարկէ տարբեր է բուն Չինլէրլի լեռնէն Վարաճնունեաց): Աւելի մանրամասն է Ե. Լալայեանի «Գարաբաղ» «Շարուր-Դարալագետազի եւ Նախի՛վեանի գաւառները», Հոս գիւղը կը գրուի Չինլէրլի եւ մտքը՝ Յովհաննու Վան: Իսկ լեռը նշանակուած է կրկին գագաթով (7681 եւ 8071 ոտր) եւ անունը՝ Սերայ-Բուլա: Իւստի յայտնի է թէ Dsinserlidagh եւ Dsynlerly-Dagh ազաւազութիւն են Չինլէրլի (Չինլէրլի անուան): Հաւանօրէն նոյն անուան ուրիշ ազաւազութիւն մը կը գտնուի Ա. Եթէ՛ի նոյն գործքին ուրիշ Հատածի մէջ, զոր գրած է անոր աշխատակիցը՝ F. Becke. Քարի տեսակներու «Մանրագիտական Հետազոտութիւններ» շարքին մէջ կայ գրութի մը՝ «Վարդագոյն խոտաբարբի Tschingerlydag (Համա, Geol. Forsch. III, p. 104): Իսկ «Յուցակ խորհրդ. Հայաստանի բնակավայրերի» (Երեւան, 1923) շինչանակեր Չինլէրլի գիւղը, թէ եւ նշանակած է քղապար (Բերալու, Ղարախաչ եւն): Վեգիբասար գաւառամասի մէջ: — Այս ամէն՝ իբր օրինակ ուրիշ նմաններու: Եր. Բ.

<sup>13</sup> Անգլ. եւ գերմ. բնագիտները հոս եւ ուրիշ երկու անգիւր եւ նոյնպէս քարտէսներուն վրայ՝ կը գրեն Dsynlerly-Dagh. (ds = d): Բայց արդ Հ. Արի՛՛ իր գեղեցիկ «Երկրաբ. Ատլաս» մէջ ունի թերթ մը, որու մասին կը գրէ. «Տիւր. Գ. Համատեսիլ Պատկեր Երասխի բարձրահովտին՝ յարակից լեռներով, Dsinserlidaghի գագաթնակէտէն, 7872 ոտր բացարձակ բարձրութիւնէ եւ Մեծ Արարատի գագաթէն 48 քիլոմ. հեռու, Արեւել. 150 Հիւսիս», եւն (Geol. Forschungen, III, Wien 1887, p. IX, եւն Geol. Atlas, եւն): Արի՛՛ լեռը նշանակած է Դավալուի եւ Սատարակի միջեւ՝ անոնց թիկունքը, համանուն Dsinserli գիւղ մ'ալ՝ Վեգի գետին մէկ օճանադակին ակնադէր մաս: Արդ կը տեսնենք որ Հ. Ղ. Արի՛՛ ղան («Այրարատ») քարտէսին վրայ այս տեղ նշանակած է Չինլէրլի, իսկ բնագրին մէջ Չինլէրլի՝ լեռն ու գիւղը

յատկապէս ճակատամարտներու հետ առնչութիւն ունեցող երկրագրական դիրքերը Պոնտոսի ու Փոքր Հայոց:

Իբր պետք կովկասեան մարզի թորքական սպայակուտին, Գուգէ, վերջին պատերազմին, քարեպատե՛հ առիթն ունեցած էր, ռազմագէտ-հետազոտողի մը աչքերով, երեքուկէս տարի շարունակ հետազոտելու Անադոլոյի հիւսիս-արեւելեան հողամասին երկրագրական դիրքերն, որոնք երբեմն թատերաբեմն էին եղած Արեւելքի եւ Արեւմուտքի տիրապետութեան երկու հսկայ ներկայացուցիչներուն այդ ահաւոր մրցակցութեան:

Հետազոտութեան առաջին մասին մէջ Գուգէ ընդհանուր գծերով կը ներկայացնէ Լուկուլոսի արշաւանքները դէպի Հայաստան, ուր համառօտիւ իրարու կը հետեւին յաջորդաբար Տիգրանակերտի ու Ըրաճանոյ ճակատամարտները, հռոմէական քանակին յառաջխաղացութիւնը մինչեւ Երասխի հովիտն ու հոն անոր ձախողանքը, նահանջը Լուկուլոսի ու զրաւումը Մծքինի, եւ վերջապէս, իբր լրումն այս ամուլ ձեռնարկին, ընկրկումը Լուկուլոսի քանակին Հայաստանի սահմաններէն դէպի Ալիս, անոր պաշտօնանկութիւնն ու Պոմպէոսի յաջորդութիւնը:

Ջորաշուերու ընթացքին ու ճակատամարտներու դիրքերու մասին հոս այս գլխոյն մէջ հեղինակին կողմէ վեր հանուած նոր տեսութիւն մը չենք գտներ. ինք եւս հետեւած է հաւատարմօքէն Լեման Հաուպտի, ինչպէս նաեւ Բելլի հեղինակօքէն զձած ժամրաններուն ուղղութեան, որոնցմէ արդէն մեծ չափով օգտուած էր նաեւ Կ. Էքհարդ իր «Լուկուլոսի արշաւանքները դէպի Հայաստան» խորագրով հիմնալի ուսումնասիրութեան մէջ<sup>1</sup>:

<sup>1</sup> Հ. Գ. Գարանֆիլեան, Տիգրան Բ. եւ հայ-լուկուլեան պատերազմները. Վիննա 1926 (Ազգ. Մատենադարան թժԳ.):

Պատահաբար միայն, եւ այն համեմատաբար շատ ուշ, օտարազգի հնախոյզներու հետաքննութեան առարկայ եղած է մեր անցեալի պատմութիւնը:

Անոր քազմութիւ մութ էջերէն միոյն լուսաբանութեան ձօնուած ներկայ ուսումնասիրութեան, կամ աւելի ծիշտը ուսումնասիրական փորձին մէջ տեսնուած ինչ ինչ — այսպէս ըսենք սովորամուլ — աւանդութիւնները, եւ յատկապէս պոնտական արշաւանքին երկրագրական դիրքերու եւ ճանապարհներու հետազոտութեանց արդիւնքը թէ եւ կը հակասէ տրամագծօքէն մեր տեսութիւններուն, սակայն եւ այնպէս մենք նկատի առնելով հետազոտութեանց ժամանակամիջոցն ու անոնց զուգընթաց ծանրակշիռ պարագաները՝ կը շնորհաւորենք հնախոյզ գորավարն իր այս առաջին փորձին, իր իսկ քառերով «Միջրդատեան հետազոտութեան շէնքին կառուցման համար ձօնած իր այս առաջին քարին» համար:

Թարգմանիչը:

Միջրդատի անձնաւորութեանը մասին հետեւեալը կ'ըսէ Մոմէն «Ինչ որ ալ մտածուի Միջրդատ թագաւորին անձնական յատկութիւններուն ու անոր սեպհական նկարագրին մասին, նա կը մնայ միշտ նշանաւոր եւ բառին իսկական իմաստով ախեղբարապատմական դէմք մը: Արեւելքի ընդգէմ Արեւմտեայց յետաշրջման իբր յառաջընթաց՝ նա բացաւ Արեւմուտքի դէմ Արեւելքի մղած նոր պատերազմը, որով թէ՛ պարտուող կողմին եւ թէ՛ յաղթականներուն հասարակաց մնաց ա՛յն դիտակցութիւնը, թէ անոր մահովն ո՛չ թէ ամէն ինչ վերջացաւ լմնցաւ՝ ալ թէ նոր սկիզբ առաւ: Իրօք ալ իր մղած բոլոր ճակատամարտներուն մէջ նա բոլորովին ուրիշ նպատակ ունէր, քան ա՛յն նպատակներն որոնց համար մղուած էին Մագնեսիայի ու Պիլզնայի բով մղուած ճակատամարտները: Երկարատեւ գինադադարէ մը յետոյ, նոր պայքար մըն էր որ ծայր տուաւ Արեւելքի

ընդդէմ Արեւմուտքի բացած հսկայական այս կռիւին մէջ, որ Մարաթոնի քով տեղի ունեցած զուպարներէն սկսելով մինչեւ արդի սերունդը հասած էր ժառանգարար: Միհրդատեան պատերազմներն միաժամանակ վերջին շարժումներն էին քաղաքական հակամարտութեան Հելլադայի ընդդէմ Հռոմայ, ու միանգամայն սկիզբն հոտմէական գերիշխանութեան դէմ այլազան եւ խորին ընդդիմադրութեան վրայ հիմնուած ըմբոստութեան մը, զոր երեւան բերաւ Ասիացոց ազգային յետաշրջութիւնն ընդդէմ Արեւմտեայց 2»:

Եթէ այս անձնաւորութեան մասին մասնագիտական հետազոտութիւններ չատ ցանցառ, եւ ա՛յն՝ ընդհանրապէս այս վերջի ժամանակներս միայն կատարուած են, անշուշտ թէ իրենց ուրոյն պատճառներն ունեցած են անոնք: Նախ եւ առաջ հին պատմական աղբիւրները խիստ ցանցառ են թիւով, եւ եղածներն ալ ուղղակի Միհրդատեան պատերազմներու վրայ վերուած ժամանակակից տեղեկութիւններ չեն: Երկրորդ մեր հնագոյն աղբիւրներն, ինչպէս են՝ Ապոլինոս, Պլուտարքոս, Իլիոն Կասիոս, Լիւկոս ո՛չ միայն հարիւր տարի ետք են առնուողն, այլ եւ անոնց տուած տեղեկութիւնները չափազանց նիհար են: Եւ երրորդ վերջապէս, այս ամէն պատճառներուն վրայ կարող ենք յաւելուլ նաեւ սա կարեւոր պարագան, թէ Միհրդատեան պատերազմներու թատերաբեմն անձանօթ մնացած էր գրեթէ մինչեւ մօտ ատեններս: Հագիւ 1922ին լոյս տեսած Andreef նորագոյն քարտէսը բաւական ճիշդ կը ներկայացնէ Անադոլուի արեւելեան հողամասերը:

Թ. Ռայնսի 3 Միհրդատի անձնաւորութիւնը քիչ մ'աւելի կը գնահատէ քան Մոմսէն. նա կը ջանայ Միհրդատ զորավարին էութեան մէջն եւս թափանցել: Ասիական արշաւանքներու նկարագրութիւնը դժբախտաբար շատ կը տուժէ աշխարհագրական քարտէսներու թերակատարութեան պատճառաւ:

Այդ վայրերու վրայ քիչ յետոյ շարք մը աշխարհագրական խուզարկութիւններ կա-

տարուեցան 4, որոնց տուած արդիւնքը Միհրդատեան պատերազմներու մասին գրուած մասնագիտական կրկին ուսումնասիրութիւններու մէջ օգտակարապէս կիրարկուած կը գտնենք: Կ. Ֆ. Լեման-Հաուպտի 5 ուղեգրութեան մէջ 69ի արշաւանքի՝ ու յատկապէս Տիգրանակերտի քով մղուած ճակատամարտին մասին մանրամասն հետազոտութիւն մը կը գտնուի: Նոյնպէս Կուրտ Էքհարդ նուիրած է ուսումնասիրութիւն մը Լուկուլլոսի արշաւանքներու դէպի Հայաստան 6: Կարծեմ թէ ընդհանրապէս ճիշդ են հետազոտութեանց արդիւնքն ա՛յն տեղերու մասին՝ ուր տեղի ունեցած են այդ դէպքերը. եւ ես կը միտիմ պատմական քննութեան համար աւելի մեծ արժէք վերագրել այն հետազոտութիւններու՝ քան զոր կ'ընէ Իւլլիւրիւկ ռազմավարական արուեստի իր պատմութեան համար: Յաջորդելու ե՛ս ալ պիտի փորձեմ նպաստ մը ընծայել Միհրդատեան հետազոտութեան շնորհիւ:

Պատերազմէ քիչ առաջ աւարտած էր այն կողմերու դիրքերը մանրամասն նշանակող 1 : 200.000 աստիճանով թրքական քարտէսը. ուղեցոյց միջոց մը, որ մինչեւ նոյն ատեն ո՛չ մէկ ուղեւոր իր տրամագրութեան ներքեւ կրցեր էր ունենալ: Այս եղաւ ինձ գրգիռ իմ այս ուսումնասիրութեան: Մէկը որ այն կողմերը գործնականապէս ռազմավարած՝ ու անձամբ փորձն առած է հոն մղուած ճակատներու ինքնուրոյն պայմաններուն, այնպիսին — չեմ տարակուսիր բնաւ — շատ աւելի ատակ է ենթադրելու ինքզինքն ա՛յն դիրքին՝ որ դիրքին մէջ որ գտնուած պիտի ըլլար ո՛րեւէ զորավար մը նա՛եւ հնութեան մէջ, եւ այսու խելամուտ պիտի ըլլար եւ ըստ այնմ պիտի դատէր, թէ ի՛նչ բան կրնար եղած ըլլալ զրդապատճառ անոր այս կերպ կամ այն կերպ կարգադրութիւններուն կամ թէ ըսենք հնարքներուն: Մինչեւ իսկ ա՛յն տեղերու մասին, ուր թէեւ չեմ այցելած անձամբ, սակայն լաւատեղեակ ըլլալով ա՛յն զինուորական շարժումներուն, որոնք հոն տեղի ունեցան այս վերջին համաշխարհային պատերազմի միջոցին, ի վիճակի

4 Anderson, A journey of exploration in Pontus, Բրիւքսէլ 1903:  
5 Armenien einst und jetzt. I. 1910.  
6 Տիգրան Բ. եւ հայ-լուկուլլեան պատերազմները. Վիեննա 1926:

2 Հմմտէ. նաեւ Lehmann-Haupt, Berliner Phil. Wochenschr. 1906, XXVI, 126.  
3 Mithradates Eupator, Roi du Pont 1890.

եմ վճռապէս ըսելու թէ ո՛րքան հնարաւորութիւն կայ հոն գորաշու մը իրագործել կարենալու: Այս դիտէ առեալ հետագայ իմ խորհրդածութիւններս արժէք պիտի ունենան նաեւ ա՛յն տեղերու համար, ուր անոնք որարդապէս պիտի հաստատեն մինչեւ այսօր կատարուած հետազոտութիւններու արդիւնքները: Այս կ'արժէ Լուկուլլոսի արշաւանքներուն համար ընդհանրապէս, մինչդեռ Պոմպէոսի արշաւանքներուն համար նոր արդիւնքներ է որ պիտի մատուցուին: Քիչ չէ՛ թիւն արդէն ա՛յն հետազոտութիւններու, որոնցմէ յառաջ եկած լաւ արդիւնքներուն մեծապէս նպաստամատոյց եղած է համազորձակցութիւնը խուզարկու գիտուններու եւ զործնական ռազմավարներու:

Ա. Լուկուլլոսի արշաւանքները:

Երրորդ Միհրդատեան պատերազմը սկսաւ 73ին Ք. ա. Միհրդատի յարձակումովը դէպի Բիւթանիա, որով նա մինչեւ Մարմարա ծովուն կղերքը յառաջացաւ, եւ հոն վերջնականապէս ալ ձախողեցաւ: Բանակն ու տորմիդն ամբողջովին փճացան, ու թաղաւորը հողիւ հող առանձինն մագապուր կրցաւ ճողողրիլ, եւ իր պետութեան սահմանները մտնել: Լուկուլլոսի՝ որ 72ին Պոնտոս մտած էր, դիմադրել կարենալու համար պէտք եղած ոչ մի զեռ հաւաքել չկարենալով Միհրդատ, երկրին արձակ քաղաքներն ու բերդերը ստիպուեցան իրենց սեղհական միջոցներովն իրենք դիրքնք պաշտպանել:

Պոնտական աշխարհն ամբողջովին բերդերով ծածկուած էր: Մեծ քաղաքներու մասին խօսելով՝ կարելի է գտնոնք երկու խումբի վերածել՝ ծովեզերեայ քաղաքներ, եւ Իրիսի (Եջիւրմակ) ու Գայլ գետի (Քէլքիտ) հովիտներուն վրայ գտնուողներ: Լուկուլլոս կրնար Անկիւրիոյ, Չորումի, Մարսուանի, Հազայի կամ Օսմանջրկի վրայով առաջորդող ճամբուն հետեւած ըլլալ, որոնք պոնտական հին ուղիներ էին (Anderson): Այս ճամբաներու վրայէն չուելով հասաւ նա պոնտական ծովեզերքը, եւ խեղճն ծովային քաղաքներու՝ յա՛տկապէս Ամիսոս (Սամսուն) եւ Թեմիսկիրա (Տերմէ) ամբոցներու պաշարման ձեռնարկեց: Բազմաթիւ բերդերու տիրեց: Միհրդատ զգալով բանակի չզոյութեան պատճա-

ռաւ դիմադրելու անհնարաւորութիւնը՝ ջանաց Կարիբայի քով նոր բանակ մը կազմել: Չյաջողեցաւ սակայն նոր նաւատորմիկ մը եւս կազմել, որով Հռոմայեցիք պատերազմի ամբողջ տեւողութեան ծովերու վրայ անվիճելի գերիշխանութիւն ունեցան: Միհրդատ 71ի արշաւանքին սկիզբը 44.000նոց ցամաքային ոյժ կրցեր էր դարձեալ համախմբել. — պատկանելի ոյժ մը, զոր Լուկուլլոս չէր կարող անտեսել: Այս պատճառաւ Լուկուլլոս շեշտակի Կարիբայի վրայ քալեց, եւ բազմն ունեցաւ, որ Եւպատորիա՝ Իրիս եւ Գայլ գետերու խառնուեցին վրայ հիմնուած ամբոցն իր դուռներն անոր առջեւ բանայ: Հետագայ գործողութիւնները, որ երկար ժամանակ սպառեցին, տեղի ունեցան գլխաւորաբար Կարիբայի (Նիկսար) շուրջ: Ակներեւ է ուրեմն այն կէտը, ինչ որ բնորոշ է այդ կողմերու ռազմավարութեան համար՝ ինչպէս նո՛յն ատեն, նմանապէս այսօր, այսինքն պարենապահ հետեւորդ գունդերու վճռական կարեւորութիւնը: Աւերեալ Պոնտոսէ չէին կարող այլ եւս Հռոմայեցիք պարենաւորել իրենց բանակը. պարէնը կը բերուէր Կապադովկիայէ, հետեւաբար Սերաստիանիկսար դժով, ինչ որ տակաւին այսօր մեծ նշանակութիւն ունի: Միհրդատ թէեւ ջանաց պարենաւորման այս դիժը կտրել, սակայն չյաջողեցաւ, եւ պարտուեցաւ հաւանորէն Սերաստիոյ եւ Նիկսարի լեռնակիրճերուն մէջ: Այս պարտութեան վրայ զգաց Միհրդատ հոռոմէական լեգէոններու գերակշռութիւնը, ու վախնալով որ մի՛ գուցէ Կարիբայի մէջ թշնամիէն պաշարուի՝ խեղճն խոյս տուաւ դէպի արեւելք: Այս նպատակով նախ իր աղին ու կազմաճար կանխաւ հեռացուց անկէ, որով եւ խուճապի ստիժ տալով, պատճառ եղաւ բանակին քարքայման: Այս դէպքը յատկանշական է ամէն ժամանակներու արեւելեան ռազմավարութեան համար: Շատ ստէպ պատահած դէպք է, որ զինուորական պարզ նահանջներն առիթ ստեղծած ըլլան խուճապային փախուստներու: Այսպիսի խուճապի մը երկիւղէն չէ՞ր, որ թուրք զորավար մը, Նիսիբի (Մծրին) ճակատամարտէն առաջ, չէր անոացած Մոլոկէի, որ խորհուրդ կու տար անոր նահանջել: Ազդեցիկ իմամ մը գտնալով նոյն պահուն փաշային, կ'ըսէ անոր. «Եթէ նահանջես, վաղն այլ եւս բանակ չես գտներ»:



Միհրդատ զգաց իր պետութեան իրեն համար ա՛լ կորսուած ըլլալը: Փախչիլ չէր համարձակեր Խրիմ, որ թէեւ իր իշխանութեան տակ էր, սակայն Հոռոմայեցիք ծովերու կը տիրապետէին. բաց ասկէ, իր որդին՝ Մաքարէս, որ հոն կառավարելէ կարգուած էր, վստահելի անձ մը չէր, որ մինչեւ իսկ յայտնապէս Հոռոմայեցւոց կողմն անցած էր 70ին: Հետեւաբար Միհրդատ նախընտրեց իր աներոջ՝ Տիգրանի, Հայոց արքային քով ապաստանիլ: Թէ իրօք ամէն ինչ կորսուած նկատած էր Միհրդատ՝ յայտնի է անկէ, որ իր կանանին ամբողջապէս սպաննել տուած էր Փառնակիոյ (Կերասոն) մէջ, որպէս զի Հոռոմայեցւոց ձեռք չիցան անոնք:

Այնուհետեւ Լուկուլլոս պոնտական քաղաքներուն իւրաքանչիւրը մի առ մի պաշարման տակ առաւ: 71ին Ամասիա ու Սիւնոպէ ինկած էին արդէն, եւ 70/69ին Հոռոմայեցիք իրենց ձմերոցը հաստատած էին Պոնտոս:

69ին Լուկուլլոս պատերազմ հրատարակեց Հայոց Տիգրան թագաւորին դէմ: Հոռոմ, ստոյգ է, այս պատերազմին փափագող չէր, թէեւ անհրաժեշտութիւն մըն էր այդ: Լուկուլլոս լոկ իր փառատենչիկ սնափառութեան յազուրդ տալու համար՝ պատճառ տուաւ անոր, այնու որ Միհրդատի յանձնումը պահանջեց Տիգրանէ: Տիգրան, պարսիկ մեղկ արքաներու տիպէն՝ հարազատ, հին, արեւելեան բռնապետ մը, աշխարհակալած էր ընդարձակածաւալ երկիրներ. նա վերջի տարիներու ընթացքին իր թագաւորութեան սահմաններուն կցած էր նաեւ ասորական պետութեան հողամասերը: Նորակազմ այս պետութեան մէջ զգալի էր միատարրութեան պակասն ու ներքին ուժի բացակայութիւնը: Տիգրան, որ մեծ աշխարհակալներու յատուկ հազուադէպ ձերբերէ գուրկ, եւ քաղաքազիտութեան սկզբունքներուն անտեղեակ էր, չանսաց խորհուրդներուն Միհրդատի, որ շարունակ յորդոր կը կարգար անոր՝ իրեն գործակցելու տարուած էր այն ցնորական գաղափարէ, թէ Հոռոմայեցիներն իր այս աշխարհակալութիւններուն լուր հանդիսատեսները պիտի ըլլային: Երբ Միհրդատ իր քով ապաստանեցաւ, մերժեց անոր ունկնդրութիւն շնորհել՝ չվստահելով անոր, եւ զրկեց զայն հեռաւոր բերդ մը, ուր մնաց Միհրդատ,

քսան ամիս ամբողջ, 71ի աշունէն մինչեւ 69ի գարունը:

Այն ինչ ըմբռնեց Տիգրան, թէ պատերազմն այլ եւս անխուսափելի է, իսկոյն Միհրդատի մօտ փութաց, ու լսեց անոր կարծիքը պատերազմ տալու եղանակի մասին: Տիգրան սակայն գոռոզարար քամահեց անոր խորհուրդներն, ու մերժեց անսալ անոնց: Նա կը համարէր զՄիհրդատ իբր իր մէկ սատրապը: Միհրդատ միմիայն 10.000 զինուոր ստացաւ իր հայրենաւանդ հողերն ետ դրաւելու համար, իսկ Տիգրանի զօրագունդերը, որոնք Տաւրոսի կողմերը բանակած էին, պիտի գրաւէին Փոքր Ասիան: Հետեւաբար Հոռոմայեցւոց հետ պատերազմել խուսափելու մասին Միհրդատի տուած բոլոր խորհուրդներն անլսելի մնացած էին:

Տիգրանի ծրագիրը ձախողեցաւ Լուկուլլոսի շատ յանդուգն մէկ ձեռնարկովը, զոր այս արշաւանքներուն ամենացայտուն մէկ դրուագը կարելի է նկատել: 69ի գարնան, Լուկուլլոս վերցուց բանակը, եւ 22.000 մարդով դիմեց չեչտակէ հայ պետութեան սիրտը՝ դէպի Տիգրանակերտ, նորակերտ մայրաքաղաքը Տիգրանի: Լուկուլլոս հետեւեցաւ մերձաւորապէս այսօրւան Սըվազ-Մալաթիա շաւղին, եւ Իգոլիի (Տոմիսա) քովէն անցնելով Եփրատը, Խարբերդի վրայով իր չուն շարունակեց դէպի ջրաբաշխը Տիգրիսի, որուն երկայնութեանը քերելով՝ հասաւ Արդանա Մադէն: Դիարբեկը 20 քմ. հիւսիսային հեռաւորութենէ մը կտրեց անցաւ Տիգրիս գետն, ու պաշարեց Տիգրանակերտ (Մուֆարդին) քաղաքը:

Հոռոմէական սակաւածեռն գունդին այս խիզախ յարձակողականը պատճառ եղաւ որ Տիգրան լքանէ իր յարձակողական ծրագիրները: Նա համախմբեց իր բանակը Մշոյ դաշտը, եւ Խուլպի կիրճէն անցնելով՝ փութաց Տիգրանակերտի օգնութեան: Միհրդատ հրահանգ ստացաւ Պոնտոսէ դառնալ: Տիգրան հակառակ իր բանակին թուական գերակշռութեան, Լուկուլլոսէ՝ Բատմանսուի քով, չարաչար պարտուեցաւ (6 Հոկտ. 69ին): Լեման Հաուպտ եւ Բէլի ճզրիտ կերպով քննած են այս պատերազմին մանրամասնութիւնները: Այս պարտութեան վրայ Տիգրանակերտ ինկաւ. Տիգրանի աշխարհակալած բոլոր երկիրները կորսուեցան, եւ Լուկուլլոս իր բանակովը ձմերեց Սղերդի մօտերը:

Լուկուլլոսի ցարդ ունեցած յաջողութիւնները նո՛յն բարձրութեան վրայ չմնացին սակայն 68ի արշաւանքին մէջ եւս: Նա ուզեց զՏիգրան՝ իր բնաշխարհին, Հայաստանի լեռնաշխարհին բարձրաւանդակ լեռներուն մէջ իսկ դարնել: Ներկայ այս արշաւանքին բո՛ւն նպատակն էր ուրեմն Արտաշատ, Երեւանի հարաւարեւելեան կողմը: Շուտ տեսնուեցաւ սակայն, որ Լուկուլլոս իրազեկ չէր բնաւ բնութեան պայմաններուն ա՛յն միջավայրերու, ուր գործողութիւնները պիտի կատարուէին. որով եւ չէր կրցած նա գործնական հետեւութիւններ հանել անոնցմէ: Նա չուզեց իր թիկունքն ապահովելու համար իր արդէն իսկ սակաւածեռն բանակն աւելի եւս անօսրացընել ու սկարացնել՝ քանի մը գունդ զինուոր հոս եւ հոն պահակ զետեղելով: Նա կարծեց թէ բանակը պիտի կարենար Հայաստանի երկրէն պարենաւորել, ա՛յս պատճառով ալ չուզեց հունձքի ժամանակէն առաջ լեռնաշխարհ հասնիլ: Ամառնամուտ էր, երբ բանակը շարժեցաւ: Այս սակայն, ինչպէս պիտի տեսնենք, ամենամեծ սխալն եղաւ Լուկուլլոսի: Հայաստանի բարձրաւանդակին վրայ գեղեցիկ օդերու եղանակը շատ կարճատեւ է: Յորենն այդ կողմերը շատ բարձր տեղեր, մինչեւ իսկ գրեթէ 2000 մետր բարձրութեան վրայ կը մշակուի: Հնար է թէ նոյն միջոցին եւս ա՛յսպէս եղած ըլլայ: Մեծ եղաւ Լուկուլլոսի յուսախարութիւնն, երբ տեսաւ որ շատ տեղեր հունձքերն ո՛չ միայն ատոքացած չէին, այլ եւ նո՛յն իսկ դեռ բոլորովին կանաչ մնացած էին անոնք:

Տիգրան իր կրած ծանր պարտութիւններէն զգաստացած ու սաստկապէս խոնարհած, զիջաւ վերջապէս զՄիհրդատ իր մօտ հրաւիրել, եւ այս անգամ անսալով անոր խորհուրդին՝ խուսափեցաւ ձախատ տալէ Հոռոմայեցւոց, եւ իր այրուծի գունդովը նեղեց զանոնք անընդհատ:

Լուկուլլոս Խուլպի կիրճէն անցնելով Մշոյ դաշտը մտնելէ յետոյ՝ դէպի Արածանի յառաջացաւ, եւ նոյնին երկայնութեանը քալեց դէպի հիւսիս: Տիգրան, որ խափանել ջանաց Հոռոմայեցւոց՝ գետին հանդիպակաց կըրն անցնելու գործողութիւնը, չյաջողեցաւ եւ կրկին պարտուեցաւ, Կարաքիլիսէի քով: Այս յաղթութեան վրայ հոռոմէական բանակն անարգել յառաջացաւ մինչեւ Բայազիդի կողմերը, ուր Աղրի-գաղ լեռնա-

շղթային ստորոտն առաջին ձիւնը տեղալով՝ օդն սկսաւ զգալաբար ցրտել: Այս պարագաներու ներքեւ հոռոմայեցի զինուորները մերժեցին իրենց չուն շարունակել:

Լուկուլլոս իր զինուորներէն սիրուած չէր բնաւ: Անոր պատերազմները մարդավայել կերպով կը մղուէին. կապուտ կողպուտը խստիւ արգիլուած էր զինուորներուն, մինչդեռ այս վերջիններս կազմուած էին առաւելապէս այնպիսի տարրերէ, որոնք յատկապէս այդ նպատակի սիրոյն կը ծառայէին: Թողունք որ փափկաճաշակ Լուկուլլոսն անգամ չէր քաշուեր իր քսակը պարարտացնելէ: Այս անկարգ զինուորներն, որոնցմէ շատերուն ծառայութեան շրջանը 67ին կը լրանար, իրենց մաքէն չէին անցուցած թէ այսպիսի բարձր ու ստոնապատ լեռնաշխարհ մը արշաւելու հրաման պիտի ստանան: Անոնք փափագող էին եղած միայն դիւրագին դափնիներու: Լուկուլլոս հարկադրուեցաւ աւելի մեղմ կլիմայով վայր մը դանոնք առաջնորդել՝ ձմերեկու: Հետեւաբար նահանջի ճամբան բռնելով քալեցուց բանակը Խոյ-Դիլմանի կամ Վանի վրայով դէպի Բաշկալա, եւ անկէ ալ անդին Ջէզիրէի վրայով դէպի Մծբին, զոր կուռով դրաւելէ յետոյ՝ կրկին ձմերեց Սղերդի քովերը:

Հնար է թէեւ որ Միհրդատ ու Տիգրան իրազեկ եղած ըլլան հոռոմէական բանակաւեղուցն վրայ տեղի ունեցած այս իրադարձութիւններուն, սակայն ետ կեցան անոնք հետապնդելէ զԼուկուլլոս, — որ նոր գործողութիւններու կը պատրաստուէր, — լաւ եւս համարելով օգտուել ժամանակէ մինչեւ 67ի գարունը, որպէս զի կորսուած երկիրները կրկին ձեռք բերել կարենան: Ուստի եւ Միհրդատ ժողովեց բանակն, ու Գայլ գետի ուղղութեամբ մտաւ Պոնտոս, ուր սպասամբութիւն մը եւս ծագեցաւ ի նպատակ իրեն: Չարկաւ, 68ի աշնան, Աղրիանոս կուսակալին Կարիբայի քով ձակասած բանակն, եւ իսկոյն պաշարման տակ առաւ քաղաքը: Երբ Տրիարիոս հոռոմայեցի օժանդակ ուժերով քաղաքին օգնութեան փութաց, վերցուց Միհրդատ պաշարումն, եւ Իրիսի հարաւային եզերքները քաշուեցաւ: Պոնտական բանակը Կոմանա քաղաքին քով գտնուող երկու կամուրջներու վրայէն Իրիսի հանդիպակաց եզերքն անցաւ: Գետախարոյցքի մը պահուսն անոնցմէ

մին կործանելով՝ հետևորդ զորագունդերու մէկ մասը կասեցաւ յառաջանալէ: Նոյն միջոցին թէպէտ եւ Միհրդատ Հոռմայեցւոյն վրայ յաղթութիւն մը չահեցաւ, սակայն դժբախտաբար անկէ օգտուել չկարենալով՝ դարձեալ գետին միւս կողմն անցաւ, սպասելով նոր ուժերու: Տրիարիոս իր ձմերոցը հաստատեց Գագիւրայի (Թուրխալ) քով, իսկ Միհրդատ անոր դէմը Ձելա (Ձիլէ) քաղաքին քովերը: Երկու հակամարտ կողմերն եւս հետեւաբար մի քիչ դէպարեւմուտք յառաջ շարժած էին: Իրօք ալ Իրիսի երկակողմեան եզրադաշտերն ու ճամբաներն այնպիսի դիրք մ'ունին, որ հնարաւութիւն կայ ուրոյն ուրոյն երկու բանակներու անոնց վրայ միաժամանակ զօրաշարժ ընելու:

Միհրդատ 67ին պատրաստուեցաւ ամբողջ մը պաշարել, որուն դիրքն անստույգ է թէեւ, սակայն շատ թանկագին աւար կը պարփակէր իր մէջ, զոր հոռմայեցի զինուորները կողոպտած էին: Հո'ս եւս ահա երեւան եկաւ Հոռմայեցոց անկարգապահ ուղին: Ասոնք որպէս զի զՄիհրդատ իր սրուշուճէն ետ կեցընեն եւ իրենց աւարը չկորսնցնեն, ստիպեցին Տրիարիոսը՝ հակառակ իսկ անոր խորին համոզման, յարձակում գործել Միհրդատի վրայ: Միհրդատ՝ Ձելա քաղաքին կողմերը, Սկոտիոս լեռան վրայ կը գտնուէր: Ձելայի միջավայրը կը բնորոշուի բազմաթիւ կոնաձեւ լեռներով, որոնց մին եղած ըլլալու էր նաեւ Սկոտիոս կոչուած լեռը: Արդ, Տրիարիոս Իրիսի անցնելով՝ յարձակեցաւ Միհրդատի վրայ: Ձելայի դէպի հիւսիս, Իրիս՝ վեթիսարի ժայռերով եզերուած նեղ ու խորունկ կիրճէ մը կը հոսէ: Հոռմայեցիները շարաշար պարտուեցան, եւ այս կիրճը կամ անոր կողմնակի բացուող մէկ ձորը թափուելով՝ ամբողջովին բնաջինջ եղան կորսուեցան: Նոյն կուսին մէջ ինկաւ նաեւ Տրիարիոս (67ի դարնան):

Լուկուլլոս, որ չէր յաջողած աւելի կանուխ ճամբայ հանել իր զինուորներն իրենց հանգստաւէտ ձմերոցէն, հիմա սկսաւ յետախաղաց ըլլալ ա'յն միւս կողմն ճամբաներուն վրայէն, որոնց վրայէն յառաջխաղաց եղած էր, երկու տարի առաջ, դէպի Հայաստան — այս է՝ Խարբերդ-Մալաթիա-Սեբաստիա զձով: Նոյն միջոցին տիրացած էր Տիգրան իր պետութեան սահմաններուն:

Լուկուլլոս յոյս ունէր թէ Տիգրան պիտի ուզէր անպատճառ նոր ճակատ մը եւս խիզախել. այս նպատակով ալ ուղեց կիսաբոլոր շրջան մ'ընելով Տիգրանի վրայ յարձակիլ: Զինուորները սակայն, որոնց ճառագիւթեան ժամանակը լրացած էր մասամբ, այս անգամ եւս հետեցին իրենց զօրավարին, Սեբաստիոյ մօտերը: Լուկուլլոս պաշտօնանկ հռչակուեցաւ Հոռմի մէջ, եւ անոր յաջորդ կարգուեցաւ Պոմպէոս, որ Միջերկրականի մէջ ծովահէններու դէմ ըրած արշաւանքէն դեռ նո'ր էր վերադարձած յաղթանակով: Պոմպէոսի ենթահրամատարը՝ Մարկիոս Ռեկս, որ երեք հոռմայեցի լեզէոններով Կիլիկիա նստած էր, մերժեց անոր գործակցիլ: Լուկուլլոս իհարկէ տեղեակ ըլլալով այս անցուդարձերու, քաջուեցաւ արեւմուտք, դէպի միջին ընթացքն Ալիսի, ուր կրցաւ նա վերջապէս իր զինուորները համոզել, զոնէ մինչեւ աշուն դրօշի տակ մնալ: Այսպէս ուրեմն ասպարէզը բաց մնալով Հոռմի երկու սիւրբի՝ թշնամիներուն, Միհրդատ կը վերադարձէ իր պետութեան բոլոր երկիրները, իսկ Տիգրան կրկին կ'աշխարհակալէ Կասպի գոլկիան:

Սակայն եւ այնպէս, ո'չ մին եւ ո'չ միւսը չյաջողեցան այնպիսի նոր ոյժ մը համախմբել, որ կարող ըլլար սարսափ ազդել Հոռմայեցոց: Անոնք արդէն իսկ քիչ յետոյ իրարմէ եւս պատակուելով՝ վերջ տուին իրարու մէջ գոյացած համախորհուրդ գործակցութեան. նախ՝ որովհետեւ Տիգրան դարձեալ սկսաւ կտակածիլ Միհրդատէ, եւ երկրորդ՝ որովհետեւ իր որդիներէն միոյն ասպտամբութեան պատճառով հարկադրուած էր բանակով Հայաստան արշաւել, ուր Պարթեւներու դէմ նոր պատերազմի մը բռնուեցաւ, որ զինքն երկար տեւ հոն մնալ ստիպեց: Միհրդատ չկրցաւ Խրիմի պոնտական ուժերն իր դրօշին տակ համախմբել, որովհետեւ իր որդին՝ Մաքարէս իշխանը, իրմէ ասպտամբած ու վերջնականապէս Հոռմայեցոց կողմն էր անցած:

Հ. Գ. ԳԱՐԱՄՓՆԵԱՆ  
(Շարունակելի):



### Chronologie der arabischen Statthalter von Armenien in den Jahren 833—887<sup>1</sup>.

Von RICHARD VASMER.

Der letzte von *al Ma'mūn* ernannte Statthalter von Armenien war, *Ja'qūbi* II, 566 zufolge, *al Hasan ibn 'Alī al Bādġisī al Ma'mūnī*. *Balāduri* 211 läßt ihn erst unter *al Mu'tasim* den Statthalterposten antreten. Sein Name steht auf einigen Dirhems des Jahres 220 (835) aus *Medinat Arrān*<sup>2</sup>. Die Hauptsorge *al Mu'tasims* in betreff der nördlichen Grenzländer war die Bekämpfung des *Bābak*, welcher schon im Jahre 201 in *al Badd*, einem Orte an der Grenze zwischen *Arrān* und *Aderbaigān*, einen Aufstand angezettelt hatte und dessen Macht beständig zunahm, so daß er schließlich ganz *Ader-*

<sup>1</sup> Այս յօդուածը գրուած է յատկապէս «Հանդէս Ամսօրեայի», համար: Հեղինակը 1925ին Записки Коллегии Востоковедов, I, ի մէջ գրած էր «Хронология наместников Армении при первых Аббасидах», որուն հայերէն թարգմանութիւնը տուինք թերթիս 1928 տարեշրջանի ընթացքին (Հայաստանի ուստիկաններու ժամանակագրութիւնը առաջին Ապպասեանց օրով, էջ 44, 157, 458): Իսկ թերթիս 1927ի նոյ.-դեկ. թուին մէջ (էջ 865) հրատարակած ենք ալ-Ամին եւ ալ-Մամուն ամիրապետներու ժամանակակից ուստիկաններու մասին իր մէկ յօդուածը. ներկայ գրութիւնս նախորդին շարունակութիւնն եւ ամբողջացումն է ուստիկանական շրջանի պատմութեան: Հեղինակին բաղձանքին համաձայն գերմաններէն բնագիրն հրատարակելէ յետոյ պիտի տանք սոյն վերջին երկու գրութեանց հայերէն թարգմանութիւնը: Խմբ. Հ. Ա.

<sup>2</sup> T n° 1847, DORN n° 486, M 44 n° 779. Vs. Glaubenssymbol in drei Zeilen. Randlegende mit Daterung *Mednat Arrān* 220. Am äußersten Rande, durch zwei Kreise von der Randlegende getrennt, sechs Ringelchen. Zwischen den vier oberen Ringelchen عروة بشر بن عبدوه. Rs. Im Felde: محمد رسول الله. Randlegende, durch zwei Kreise vom Felde getrennt: محمد رسول الله. Wer der auf diesen Münzen genannte *Bisr ibn 'Urwa* war, ist unbekannt.

*baigān* unter seiner Gewalt hatte und dessen Anhänger sich auch im persischen *Jraq* ausbreiteten. Im Jahre 218 erlitten diese gegen die Truppen des Kalifen unter *Ishāq ibn Ibrāhīm* bei *Hamadān* eine Niederlage<sup>3</sup>. Danach wurde *Abū Sa'īd Muḥammed ibn Jūsuf al Merwazī at Tuġrī* nach *Aderbaigān* geschickt, um die Befestigungen zwischen *Ardebīl* und *Zengān* instand zu setzen und dieser Feldherr brachte dem *Bābak* selbst eine Niederlage bei (*Ṭabarī* III, 1171). Ob er gerade Statthalter von *Aderbaigān* war, wird nicht gesagt. Danach wird ein *Muḥammed ibn al Ba'it* erwähnt, der den Herrn von *Marand 'Işma al Kurdī*, welcher zu *Bābak* übergegangen war, samt seinem ganzen Anhang durch List gefangen nahm und zum Kalifen abführte. Zur selben Zeit wurde *Ṭahir ibn Ibrāhīm*, der Bruder des schon erwähnten *Ishāq ibn Ibrāhīm*, nach *Aderbaigān* gesandt, aber ob einer von diesen Männern den Statthalterposten bekleidete, wird nicht mitgeteilt (*Ja'qūbi* II, 577—578).

Im Jahre 220 sandte *al Mu'tasim* den *al Afšīn Haidar ibn Kaūs al Osrūsānī* zur Bekämpfung des *Bābak* und ernannte ihn, *Ja'qūbi* II, 578 zufolge, zum Statthalter aller Gebiete, welche er auf seinem Kriegszuge passieren würde. Da *al Afšīn* sich in *Barzand* festsetzte und die Operationen von dort aus leitete, ist es sicher, daß er Statthalter von *Aderbaigān* war; da die Statthalter von Armenien bis zum Jahre 225 von ihm ernannt wurden, unterliegt es keinem Zweifel, daß auch Armenien zu seiner Statthalterschaft gehörte (vgl. *Weil* II, 326). Die vorhin erwähnten *Muḥammed ibn Jūsuf* und *Muḥammed ibn al Ba'it* nahmen an den Kämpfen auch weiterhin teil<sup>4</sup>, wirkten aber unter *al Afšīn*s Oberbefehl. Im *Ramaḍān* 222 wurde *al Badd* erobert und am 10. *Šawwāl* desselben Jahres *Bābak* gefangen genommen (*Ṭabarī* 1197—1228).

Zum Statthalter von Armenien ernannte *al Afšīn*, *Ja'qūbi* II, 579 zufolge, gleich bei seiner Ankunft in *Aderbaigān*, den *Muḥam-*

<sup>3</sup> *Ṭabarī* III, 1165, *Weil* II, 298, *DAGHBASCHEAN*, Gründung des Bagratidenreiches 5.  
<sup>4</sup> *Ṭabarī* III, 1172—1178, 1197—1226 und 1190, 1193.